# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՅԻՍԻ 2025թվականի N 053-Ա

ՄԱԶԾ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ Ի ՍԿԶԲԱՆԵ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ)՝ ՀՀ-ում Սերբիայի կառավարության և ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մեկնարկել է «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է ՄԱԶԾ-ի և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի համագործակցությամբ նոր բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի վերանորոգում Զորագետ բնակավայրում, որտեղ կմատուցվեն մշակութային, թատերական, արվեստի և կրթական բաղադրիչներ ունեցող արտադպրոցական ծառայություններ և որ կարիքների գնահատման և նախնական հաշվարկների փուլը հաջողությամբ ավարտված է՝ Փամբակ համայնքի ավագանին որոշում է՝

3. Տալ հավանություն «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում ՄԱԶԾ-ի և ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի համագործակցությամբ «Նոր բազմաֆունկցիոնալ հանրային տարածքի վերանորոգում Զորագետ բնակավայրում» ծրագրի իրականացմանը:

2. Մինչև սույն թվականի հունիսի 6-ը համայնքի կողմից ՄԱԶԾ-ին փոխանցել ծրագրի համաֆինանսավորման համայնքի մասնաբաժինը՝ 10.000.000 /տաս միլիոն ՀՀ դրամ/, ըստ ՄԱԶԾ ֆինանսական ընթացակարգերի գնումների գործընթացը սկսելու նպատակով:

3. Հաստատել նաև հետագայում ծրագրի իրականացման ընթացքում առաջացած մինչև 5.000.000 ՀՀ դրամ լրացուցիչ ֆինանսավորման ապահովումը համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ